ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 310-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿՆ ՈՒ ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 15.03.2021թ. N 95-Ա, 24.05.2021թ. N 165-Ա որոշումները, սեփականության իրավունքի N 06102021-06-0018 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Ռուբեն Գարեգինի Պապոյանն ընդունել է տնտեսական սենյակն ու աստիճանահարթակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սայաթ-Նովա փողոց, N 1-55/1 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 15.03.2021թ. N 95-Ա և 24.05.2021թ. N 165-Ա որոշումներով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, ընդհանուր 11.86 քմ արտաքին մակերեսով (9.1 քմ ներքին մակերեսով) տնտեսական սենյակն ու աստիճանահարթակը՝ 16865 (տասնվեց հազար ութ հարյուր վաթսունհինգ) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.000996 հա մակերեսով հողամասը՝ 18702 (տասնութ հազար յոթ հարյուր երկու) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Ռուբեն Գարեգինի Պապոյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում տնտեսական սենյակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 06
ք. Ալավերդի